

Քինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՄԼ ՖԵՇՆ» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2024թ.



## Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՄԼ ՖԵՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին

### Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՄԼ ՖԵՇՆ» ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Վերապահումով կարծիքի հիմք

Մենք նշանակվել ենք Ընկերության աուդիտոր 2026թ. մարտի 28-ին և այդ պատճառով հնարավորություն չենք ունեցել մասնակցել Ընկերության պաշարների փաստացի գույքագրմանը, որոնք ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, համապատասխանաբար 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 159,659 հազար դրամ, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 120,164 հազար դրամ: Ընկերության պաշարների անվանացանկի ծավալից ելնելով՝ մենք հնարավորություն չենք ունեցել այլընտրանքային աուդիտորական ընթացակարգերի միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների առկայության վերաբերյալ:

Քանի որ պաշարների սկզբնական մնացորդները ներառվում են ֆինանսական արդյունքներում և դրամական հոսքերում, մենք չենք կարողացել որոշել 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տարվա վնասի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների ճշգրտման անհրաժեշտությունը:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի

գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### **Հանգամանքի շեշտադրում**

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 3.2-ի և 27-ի վրա, որոնք վերաբերում են Ընկերության կողմից ՖՀՄՍ կիրառումն առաջին անգամ հանգամանքին: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

### **Այլ հանգամանք**

Ընկերության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:

### **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական

ընթացակարգեր՝ այդ դիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման դիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման դիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեկավարի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:


«ԷՖ ԷՍ ՓԻ ԸՂՎԱՅՍ» ՍՊԸ,

Ռուզաննա Բադալյան  
Տնօրեն

22 ապրիլի 2026թ.  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն



Գևորգ Խաչիսյան ACCA  
Աուդիտոր



## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
	Ծանոթ.			
<b>Ակտիվներ</b>				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	175,494	99,502	84,876
Ոչ նյութական ակտիվներ		1,641	538	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	549,307	408,080	427,927
Հետաձգված հարկային ակտիվներ	6	8,965	12,156	8,833
		<u>735,407</u>	<u>520,276</u>	<u>521,636</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	7	159,659	120,164	150,377
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	7,749	44,917	9,075
Տրված փոխառություններ		146,786	10,541	-
Դրամական միջոցներ և համարժեքներ	9	26,329	30,545	73,645
		<u>340,523</u>	<u>206,167</u>	<u>233,097</u>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<u><b>1,075,930</b></u>	<u><b>726,443</b></u>	<u><b>754,733</b></u>

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ծանոթ.			2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
<i>Կապիտալ և պահուսպներ</i>	10			
Կանոնադրական կապիտալ		48,855	48,855	37,020
Կուտակված շահույթ		164,718	-	65,990
		<u>213,573</u>	<u>48,855</u>	<u>103,010</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	11	86,634	61,030	51,700
Վարձակալության գծով պարտավորություն	5	376,069	328,634	368,675
		<u>462,703</u>	<u>389,664</u>	<u>420,375</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	92,202	60,824	75,091
Վարկեր և փոխառություններ	11	77,829	63,190	41,119
Վարձակալության գծով պարտավորություն	5	207,025	137,817	101,454
Ընթացիկ հարկային պարտավորություն		22,598	26,093	13,684
		<u>862,357</u>	<u>677,588</u>	<u>651,723</u>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<u><b>1,075,930</b></u>	<u><b>726,443</b></u>	<u><b>754,733</b></u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. ապրիլի 22-ին:

Լիանա Մարտիրոսյան  
Տնօրեն



Հայկուհի Նարիմանյան  
Գլխավոր հաշվապահ

Digitally signed by  
NARIMANYAN HAYKUHI  
5212730325  
Date: 2026.04.22

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ.
		դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	13	1,692,753	1,320,608
Վաճառքի ինքնարժեք	14	(794,396)	(595,052)
Համախառն շահույթ		898,357	725,556
Այլ եկամուտ		11,370	1,789
Իրացման ծախսեր	15	(461,916)	(351,024)
Վարչական ծախսեր	16	(155,091)	(114,375)
Այլ ծախսեր	17	(19,178)	(9,223)
Գործառնական գործունեությունից շահույթ		273,542	252,723
Ֆինանսական ծախսեր		(70,783)	(64,821)
Այլ ֆինանսական հոդվածներ	18	7,790	6,822
Շահույթ մինչև հարկերը		210,549	194,724
Շահութահարկի գծով ծախս	19	(45,831)	(34,551)
Տարվա շահույթ		164,718	160,173
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>164,718</b>	<b>160,173</b>

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնա- դրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	37,020	65,990	103,010
Տարվա շահույթ	-	160,173	160,173
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	160,173	160,173
Շահաբաժիններ	-	(226,163)	(226,163)
Կանոնադրական կապիտալի համալրում	11,835	-	11,835
<b>2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>48,855</b>	<b>-</b>	<b>48,855</b>
Տարվա շահույթ	-	164,718	164,718
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	164,718	164,718
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>48,855</b>	<b>164,718</b>	<b>213,573</b>

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների  
բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

(շարունակություն)

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	164,718	160,173
Ճշգրտումներ <sup>1</sup>		
Մաշվածություն և ամորտիզացիա	200,336	149,937
Շահութահարկի գծով ծախս	45,831	34,551
Ֆինանսական ծախս	70,783	64,821
Այլ ֆինանսական հոդվածներ	(7,790)	(6,822)
<b>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</b>	<b>473,878</b>	<b>402,660</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(19,390)	(35,665)
Պաշարների փոփոխություն	(39,495)	30,213
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	36,959	(8,503)
<b>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</b>	<b>451,952</b>	<b>388,705</b>

## Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վճարված տոկոսներ	(70,783)	(64,821)
Վճարված շահութահարկ	(46,135)	(25,465)
<b>Գործառնական գործունեությունից ստացված զույր դրամական միջոցներ</b>	<b>335,034</b>	<b>298,419</b>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(103,752)	(33,787)
Տրված փոխառություններ	(178,220)	(41,341)
Տրված փոխառությունների հետ վերադարձ	41,850	-
<b>Ներդրումային գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ</b>	<b>(240,122)</b>	<b>(75,128)</b>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ	100,000	78,880
Մարված վարկեր և փոխառություններ	(59,831)	(98,446)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(139,743)	(113,797)
Վճարված շահաբաժին	-	(144,573)
Կանոնադրական կապիտալի համալրում	-	11,835
<b>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ</b>	<b>(99,574)</b>	<b>(266,101)</b>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(4,662)	(42,810)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	446	(290)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	30,545	73,645
<b>Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում</b>	<b>26,329</b>	<b>30,545</b>

2023թ. հայտարարված շահաբաժինները մասնակիորեն մարվել են ոչ դրամական եղանակով: Մասնավորապես՝ 81,590 հազար դրամի չափով շահաբաժինները վերակազմակերպվել են որպես բաժնետիրոջից ստացված փոխառություն:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ՄԼ ՖԵՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) առևտրային կազմակերպություն է, որը գրանցվել է 2017թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից (գրանցման համար՝ 271.110.973610):

Ընկերության գործունեության հիմնական նպատակն է առևտրային գործունեության իրականացումը, մասնավորապես՝ Zarina բրենդի հագուստի և աքսեսուարների մանրածախ վաճառքը:

Zarina բրենդը հանդիսանում է ռուսական ծագմամբ հագուստի արտադրող և մանրածախ վաճառող ընկերություն: Այն հանդիսանում է Melon Fashion Group-ի հիմնական բրենդներից մեկը և ապահովում է ընկերության ընդհանուր վաճառքների զգալի մասը: Բրենդը մասնագիտացած է ժամանակակից հագուստի արտադրության մեջ և ունի լայն աշխարհագրական ներկայություն մի շարք ԱՊՀ երկրներում:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 108 մարդ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 81 մարդ):

Ընկերության գտնվելու վայրն է՝ Կոտայք, Զովունի 4 փ, 120-2/1:

### Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Ծարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը: 2025թ. Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026թ. կանխատեսվում է 5.4%:

2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների մասով եկամտային հարկի վերադարձի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները: Երևանի վարչական տարածքում կառուցապատողից բնակարանների ձեռքբերման համար 2025թ. հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի սպասարկման համար վճարված տոկոսների մասով եկամտային հարկը չի վերադարձվելու գնորդին: Նշված սահմանափակումը չի կիրառվում մինչև 2022թ. հունվարի 1-ն ընդունված որոշումներով ստացված շինարարության թույլտվությունների հիման

վրա կառուցված (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կամ անհատական բնակելի տների նկատմամբ:

Ղեկավարությունը գնահատել է տնտեսական ընթացիկ միջավայրի ազդեցությունը գործունեության վրա և արտացոլել է դա սույն ֆինանսական հաշվետվություններում: Սակայն տնտեսական և քաղաքական հետագա իրավիճակը կարող է տարբերվել ներկայիս ակնկալիքներից, և նման տարբերությունները կարող են ազդել ֆինանսական վիճակի, արդյունքի և դրամական հոսքերի վրա:

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

### 2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

### **Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ. էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարզավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարզավորությունը վաճառք և հեղադարձ վարձակալությամբ գործարքներում» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ),
- «Մարակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ» (ՀՀՄՍ 7 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ),

### **Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
  - «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ)
  - ՀՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»
- ՀՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»:

### 3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

#### 3.1 Արտարժույթ

##### *Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում օգուտի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

#### 3.2 Ընդհանուր դրույթներ և ՖՀՄՄ-ների առաջին անգամ ընդունումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) համաձայն, որոնք ուժի մեջ են եղել 2024թ. դեկտեմբերի 31-ին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՄ-ներին անցման ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ծանոթագրություն 27-ում:

#### 3.3 Հիմնական միջոցներ

##### *Սկզբնական արժեքով հաշվարկված հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	20 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Տնտեսական գույք	1-5 տարի
Այլ	8-10 տարի:

### 3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

### 3.5 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

### 3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը և պաշարների առանձնացված հաշվառման մեթոդը: Այն ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### 3.7 Ֆինանսական գործիքներ

#### *Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

### *Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում:

### *Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

#### *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

#### *Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով*

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ

վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Ընկերությունը հաշվառում է իր ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, եթե դրանք բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է համապատասխան դրամական հոսքերը «պահել հավաքագրման համար» և վաճառել դրանք և
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Այլ համապարփակ արդյունքում ճանաչված ցանկացած օգուտը կամ վնասը կմարվի ակտիվի ապաճանաչման ժամանակ:

#### *Ֆինանսական ակտիվների արժեքը*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեքը կմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեքը կման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

### *Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Մնացորդները բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

### *Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

### *Վարկեր և փոխառություններ*

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

### *Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## **3.8 Վարձակալված ակտիվներ**

Ընկերությունը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում վաճառքների տարածքների համար: Պայմանագրի սկզբում Ընկերությունը գնահատում է՝ արդյո՞ք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և համապատասխան վարձակալական պարտավորությունը բոլոր վարձակալական պայմանագրերի գծով, բացառությամբ կարճաժամկետ վարձակալության (12 ամիս կամ ավելի պակաս ժամկետով) և ցածրարժեք ակտիվների վարձակալության:

Վարձակալական գույք հանդիսացող տարածքները ընդգրկվում են օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Ընկերությունն ընտրել է՝ ըստ հիմքում ընկած ակտիվների դասի (անշարժ գույքի/առևտրային տարածքների վարձակալություն), չառանձնացնել ոչ վարձակալական բաղադրիչները վարձակալական բաղադրիչներից և դրա փոխարեն յուրաքանչյուր վարձակալական բաղադրիչն ու դրա հետ կապված ցանկացած ոչ վարձակալական բաղադրիչ հաշվառել որպես մեկ միասնական վարձակալական բաղադրիչ:

#### **Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ**

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք գեղջելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզումներ:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումն արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Այն վարձակալության պայմանագրերի դեպքում, որտեղ վարձատուն հանդիսանում է ֆիզիկական անձ, Ընկերությունը հանդես է գալիս որպես հարկային գործակալ: Վարձակալական պարտավորությունը չափվում է՝ հիմնվելով համախառն (gross) պայմանագրային վճարների վրա, որոնք ներառում են ինչպես վարձատուին վճարվող զուտ վարձավճարը, այնպես էլ վերջինիս անունից հաշվարկված և պետական բյուջե վճարվող եկամտային հարկը (PIT): Այս գումարները դիտարկվում են որպես հաստատագրված վճարումների մաս, քանի որ դրանք ներկայացնում են վարձակալության պայմանագրից բխող Ընկերության անխուսափելի տնտեսական արտահոսքերը:

### 3.9 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:  
Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:  
Զբաղիված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:  
Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

### 3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

### 3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

### 3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայություններ: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- (գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

#### *Վճարովի բացակայություններ*

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

### Պարզևավճարներ

Պարզևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունը ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

### 3.13 Հասույթ

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունը առաջնորդվում է 5-րդայի գործընթացով:

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

#### 4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ, մներ,		Արտադրական գույք, տնտեսական գույք,	Կառուցման ընթացքում հիմնական միջոցներ	Այլ	Ընդամենը
	Հող, շենքեր և շինություններ	տրանսպորտային միջոցներ*	ան գույք, գործիքներ			
<i>Սկզբնական արժեք</i>						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	15,856	35,458	19,389	3,112	59,738	133,553
Ավելացում	332	22,832	10,996	(3,112)	2,157	33,205
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,188	58,290	30,385	-	61,895	166,758
Ավելացում	29,329	59,752	9,638	-	3,264	101,983
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,517	118,042	40,043	-	65,159	268,741
<i>Կույրակված մաշվածություն և արժեզրկում</i>						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	398	9,029	11,286	-	27,964	48,677
Տարվա հաշվարկ	1,580	8,294	5,488	-	3,217	18,579
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,978	17,323	16,774	-	31,181	67,256
Տարվա հաշվարկ	2,240	14,423	5,833	-	3,495	25,991
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,218	31,746	22,607	-	34,676	93,247
<i>Հաշվեկշռային արժեք</i>						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	15,458	26,429	8,103	3,112	31,774	84,876
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,210	40,967	13,611	-	30,714	99,502
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	41,299	86,296	17,416	-	30,483	175,494

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով Ընկերությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 327,900 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 161,150 հազար դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարձակալված սարքավորումների հաշվեկշռային արժեքը	6,250	6,250
Վարձակալված սարքավորումների գծով հաշվարկված մաշվածությունը	(2,015)	(1,234)

## 5 Վարձակալություն

### 5.1 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարածք	549,307	408,080
	<b>549,307</b>	<b>408,080</b>

### 5.2 Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ	207,025	137,817
Ոչ ընթացիկ	376,069	328,634
	<b>583,094</b>	<b>466,451</b>

Հաշվետու տարվա ընթացքում օգտագործման իրավունքով ակտիվների ավելացումները կազմել են՝

2023թ.՝ 111.5 մլն դրամ

2024թ.՝ 314.9 մլն դրամ

Ընկերության վարձակալական գործունեությունը հիմնականում ներառում է վաճառասրահներ և պահեստ:

#### *Վարձակալական պորտֆելի որակական նկարագիրը*

Ընկերությունը վարձակալում է տարբեր առևտրային սրահներ և պահեստ: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են 3-ից 5 տարի ֆիքսված ժամկետով, սակայն կարող են ներառել երկարաձգման հնարավորություններ: Վարձակալության պայմանները բանակցվում են անհատական հիմունքներով և պարունակում են տարբեր դրույթների ու պայմանների լայն շրջանակ:

#### *Փոփոխուն վարձակալական վճարներ*

Որոշ վաճառասրահների վարձակալության պայմանագրեր պարունակում են փոփոխուն վճարման պայմաններ, որոնք կապված են ամսական վաճառքի ծավալների / ինդեքսավորման հետ: Փոփոխուն վարձակալական վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ տեղի է ունենում այդ վճարումները հարուցող իրադարձությունը: Այս վճարումները ներառված չեն վարձակալական պարտավորության չափման մեջ: Փոփոխուն վճարման պայմանների կիրառումը օգնում է համապատասխանեցնել վարձակալական ծախսերը հասույթի/օգտագործման հետ և նվազեցնում է Ընկերության ֆիքսված ծախսերի բեռը ցածր ակտիվության ժամանակաշրջաններում:

*Կարճաժամկետ և ցածրարժեք ակտիվների վարձակալություն*

Ընկերությունն օգտվում է կարճաժամկետ վարձակալության գծով ճանաչման բացառությունից այն պայմանագրերի համար, որոնց ժամկետը չի գերազանցում 12 ամիսը:

ՖՀՄՍ 16-ի կիրառման շրջանակներում Ընկերությունն օգտվել է ստանդարտով թույլատրելի հետևյալ գործնական բնույթի պարզեցումներից.

Ընկերությունն ընտրել է չառանձնացնել ոչ վարձակալական բաղադրիչները (ինչպիսիք են՝ ընդհանուր օգտագործման տարածքների սպասարկումը, մաքրումը և կոմունալ ծառայությունները) և բոլոր առևտրային տարածքների վարձակալության պայմանագրերի համար դրանք հաշվառում է որպես մեկ միասնական վարձակալական բաղադրիչ:

*Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ*

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածության ծախս	173,679	131,314
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախս (ներառված ֆինանսական ծախսում)	50,837	48,580
Կարճաժամկետ և ցածրարժեք ակտիվների վարձակալություն հետ կապված ծախսեր (ներառված իրացման ծախսերի մեջ)	7,102	5,815
Փոփոխուն վարձակալական վճարների հետ կապված ծախսեր (ներառված իրացման ծախսերի մեջ)	3,167	2,436

*Մարման ժամկետների վերլուծություն*

Ստորև ներկայացված է վարձակալական վճարների մարման ժամկետների վերլուծությունը, որը ցույց է տալիս հաշվետու ամսաթվից հետո վճարվելիք չգեղչված վարձակալական վճարները.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
1 տարվա ընթացքում	253,945	175,881
1-ից 5 տարվա ընթացքում	340,872	365,755
<b>Ընդամենը չգեղչված վարձակալական վճարներ</b>	<b>594,817</b>	<b>541,636</b>

## 6 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	12,156	8,833
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տե՛ս ծանոթագրություն 19)	(3,191)	3,323
Տարեվերջի մնացորդ	<b>8,965</b>	<b>12,156</b>

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Վարձակալության գծով պարտավորություններ	83,961	20,996	104,957
Չօգտագործված արձակուրդային պահուստ	1,649	1,234	2,883
	<u>85,610</u>	<u>22,230</u>	<u>107,840</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	73,454	25,421	98,875
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	<u>12,156</u>	<u>(3,191)</u>	<u>8,965</u>

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Վարձակալության գծով պարտավորություններ	84,623	(662)	83,961
Չօգտագործված արձակուրդային պահուստ	1,237	412	1,649
	<u>85,860</u>	<u>(250)</u>	<u>85,610</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	77,027	(3,573)	73,454
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	<u>8,833</u>	<u>3,323</u>	<u>12,156</u>

## 7 Պաշարներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ պահեստում	159,659	115,694
Այլ	-	4,470
	<b>159,659</b>	<b>120,164</b>

Պաշարները գրավադրված չեն:

## 8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	7,465	44,917
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	284	-
	<b>7,749</b>	<b>44,917</b>

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

22 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ոիսկի և ակնկալվող պարտքային ոիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Արժեզրկման պահուստի ընթացիկ և համադրելի գումարները հաշվարկելիս կիրառվել է ՖՀՄՍ 9-ի՝ ակնկալվող կորուստների մոդելը:

## 9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	7,883	8,014
Դրամական միջոցներ ճանապարհին	15,237	20,771
Բանկային հաշիվներ	3,209	1,760
	<b>26,329</b>	<b>30,545</b>

## 10 Կապիտալ և պահուստներ

### 10.1 Կանոնադրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր	Սովորական բաժնետոմսեր
	2024թ.	2023թ.
1 հատ հասարակ բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ ՀՀ դրամ անվանական արժեքով	48,855,000	48,855,000

12,685 հազար դրամի չափով ավելացումն իրենից ներկայացնում է բաժնետիրոջ կողմից սեփական կապիտալում կատարված լրացուցիչ ներդրում: Այս ներդրման դիմաց հավելյալ բաժնետոմսեր չեն թողարկվել, և թողարկված բաժնետիրական կապիտալը շարունակում է բաղկացած լինել մեկ սովորական բաժնետոմսից:

Ընկերության միակ մասնակիցը Լիանա Մարտիրոսյանն է:

### 10.2 Շահաբաժիններ

2024թ. շահաբաժին չի հայտարարվել և չի վճարվել (2023թ.՝ հայտարարվել է 226,163 հազար դրամի և փաստացի վճարվել 144,573 հազար դրամի):

## 11 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Չապահովված</i>				
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	-	19,675	-	-
Ստացված փոխառություններ	-	-	-	-
Վարկային գծեր	14,077	14,713	-	-
	<u>14,077</u>	<u>34,388</u>	<u>-</u>	<u>-</u>
<i>Ապահովված</i>				
Բանկային վարկեր	60,817	26,870	86,634	59,033
Ֆինանսական վարձակալություն	2,935	1,932	-	1,997
	<u>63,752</u>	<u>28,802</u>	<u>86,634</u>	<u>61,030</u>
	<u><b>77,829</b></u>	<u><b>63,190</b></u>	<u><b>86,634</b></u>	<u><b>61,030</b></u>

Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորությունների համադրում.

	Մուտքեր/ Դրամա- կան 2024թ. հունվարի 1	Մարումներ/ դրամական հոսքեր	Տոկոսավ- ճար	Տոկոս ային ծախս	Արտար- ժույթի վերագն ա- հատում	Նոր վարձակա- լություններ, պայմանագրի փոփոխույթ- յուն և վարձակալու- թյան զիջումներ/ վերադասակ արգում կարճաժամ- կետ կրեդիտորա- կան պարտքի	2024թ. դեկտեմբերի 31
Վարկեր և փոխառություններ	124,220	100,000	(59,831)	(19,946)	19,946	- 74	164,463
Վարձակալության գծով պարտավորություններ	466,451	-	(139,743)	(50,837)	50,837	- 256,386	583,094
	<b>590,671</b>	<b>100,000</b>	<b>(199,574)</b>	<b>(70,783)</b>	<b>70,783</b>	<b>- 256,460</b>	<b>747,557</b>

	Մուտքեր/ Դրամա- կան 2023թ. հունվարի 1	Մարումներ/ դրամական հոսքեր	Տոկոսավ- ճար	Տոկոս ային ծախս	Արտար- ժույթի վերագն ա- հատում	Նոր վարձակա- լություններ, պայմանագրի փոփոխույթ- յուն և վարձակալու- թյան զիջումներ/ վերադասակ արգում կարճաժամ- կետ կրեդիտորա- կան պարտքի	2023թ. դեկտեմբերի 31
Վարկեր և փոխառություններ	92,819	78,880	(98,446)	(16,241)	16,241	- 50,967	124,220
Վարձակալության գծով պարտավորություններ	470,129	-	(113,797)	(48,580)	48,580	- 110,119	466,451
	<b>562,948</b>	<b>78,880</b>	<b>(212,243)</b>	<b>(64,821)</b>	<b>64,821</b>	<b>- 161,086</b>	<b>590,671</b>

Վարկերն ու փոխառություններն ապահովված են գրավով:

## 12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	12,488	12,413
Պետական բյուջեին կրեդիտորական պարտքեր	47,991	27,539
Հատուցումների աշխատակիցներին	3,994	3,310
Չօգտագործված արձակուրդային վճարների գծով պահուստ	16,015	9,160
Կրեդիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով	11,714	8,402
	<b>92,202</b>	<b>60,824</b>

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 1 ամիս (2023թ.՝ 1 ամիս): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 22-ում:

## 13 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից հասույթ	1,692,621	1,320,608
Ծառայությունների մատուցումից հասույթ	132	-
	<b>1,692,753</b>	<b>1,320,608</b>

## 14 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված ապրանքների ինքնարժեք	794,396	595,052
	<b>794,396</b>	<b>595,052</b>

## 15 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցներին հատուցումներ	199,927	157,051
Մաշվածություն և ամորտիզացիա	14,961	10,567
Օգտագործման իրավունքով ակտիվների մաշվածության ծախս	173,679	131,314
Վարձակալության ծախսեր (փոփոխուն և կարճաժամկետ)	10,269	8,251
Բանկային ծառայությունների ծախսեր	19,610	13,867
Վաճառարահների ենթակառուցվածքների սպասարկման և պահպանման ծախսեր	8,160	-
Կոմունալ և կապի ծախսեր	12,546	9,399
Մարկետինգի և գովազդի ծախսեր	6,880	4,812
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	8,464	4,327
Այլ	7,420	11,436
	<b>461,916</b>	<b>351,024</b>

## 16 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցներին հատուցումներ	127,619	94,092
Մաշվածություն և ամորտիզացիա	11,696	8,056
Կոմունալ և կապի ծախսեր	6,297	1,006
Բանկային ծառայությունների ծախսեր	2,212	2,180
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	3,527	2,279
Այլ	3,740	6,762
	<b>155,091</b>	<b>114,375</b>

## 17 Այլ ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծախսեր տույժերից և տուգանքներից	2,914	725
Արտարժույթի փոխարկման տարբերությունից ծախսեր	14,872	7,439
Այլ	1,392	1,059
	<b>19,178</b>	<b>9,223</b>

## 18 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Փոխարժեքային տարբերություններից օգուտ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10,800	10,435
Դրամական միջոցներ և համարժեքներ	1,692	206
	<b>12,492</b>	<b>10,641</b>
<i>Փոխարժեքային տարբերություններից վնաս</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(3,456)	(3,323)
Դրամական միջոցներ և համարժեքներ	(1,246)	(496)
	<b>(4,702)</b>	<b>(3,819)</b>
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ	<b>7,790</b>	<b>6,822</b>

## 19 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	42,640	37,874
Հետաձգված հարկ	3,191	(3,323)
	<b>45,831</b>	<b>34,551</b>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ.		2023թ.	
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	210,549		194,724	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	37,899	18	35,050	18
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	7,932	4	(499)	3
Շահութահարկի գծով ծախս	<b>45,831</b>		<b>34,551</b>	

## 20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք սովորաբար հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

#### Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

#### Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

### *Իրական արժեքի չափումը*

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում:

### *Մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները*

Ղեկավարությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում է մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և մնացորդային արժեքների գնահատումները՝ հիմնվելով ակտիվների ակնկալվող օգտակարությունից: Այս գնահատումներում անորոշությունները կապված են տեխնոլոգիական հնության հետ, որը կարող է փոխել որոշակի ծրագրային ապահովման և SS սարքավորումների օգտակարությունը, ինչպես նաև բնապահպանական կանոնակարգերը, որոնք կարող են հանգեցնել աղտոտող ակտիվների ավելի արագ մաշվածությանը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության վերանայումը իրականացվել է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվի դրությամբ հայտնի կլիմայական փոփոխությունը և շրջակա միջավայրի կանոնակարգերը, որոնք Ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի վրա չեն հայտնաբերել որևէ էական ազդեցություն:

Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

### *Կլիմային առնչվող հարցեր*

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ հաշվի է առնվել կլիմային առնչվող գործոնների պոտենցիալ ազդեցությունը, այդ թվում շրջակա միջավայրին վերաբերող օրենսդրությունը Ընկերության ստանձնած պարտավորությունները, որոնք կարող են ազդել ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արժեքի վրա: Ֆինանսական հաշվետվությունների վրա կլիմայի փոփոխության երկարաժամկետ հետևանքները դժվար են կանխատեսել, և ղեկավարությունից պահանջվում է նշանակալի ենթադրություններ կադարել ու գնահատումներ մշակել: Շատ դեպքերում կիրառվող դատողությունները վերաբերում են ակտիվների փոխհատուցվող գումարին և մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետներին: Այս գնահատումը ներառում է Ընկերության վրա հնարավոր ազդեցությունների լայն շրջանակ՝ պայմանավորված ֆիզիկական և անցումային ռիսկերով: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Այս ռիսկերը դառնում են կարգավորիչ, քաղաքական և հասարակական մարմինների մանրագնին ուսումնասիրության առարկա՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, սակայն դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ էական անորոշություններ կան: Անցումային ռիսկերի

առումով անորոշությունները մնում են կարգավորող և քաղաքական շրջանականների մոտալուս փոփոխությունների, սպառողների պահանջների և մատակարարման շղթաների փոփոխությունների ազդեցության հետ կապված:

Ընկերությունը կարծում է, որ կլիմային առնչվող հարցերը չեն հանգեցնի ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր հոդվածի հիմքում ընկած գնահատումների և ենթադրությունների էական անորոշության: Չնայած այն փաստին, որ կլիմային առնչվող ռիսկերը ներկայումս կարող են նշանակալի ազդեցություն չունենալ չափման վրա, Ֆոնդը ուշադիր հետևում է համապատասխան փոփոխություններին և զարգացումներին, ինչպիսին է կլիմայի վերաբերյալ նոր օրենսդրությունը:

## 21 Ֆինանսական գործիքներ

### 21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

## 22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

### Ֆինանսական ռիսկի գործոններ

#### ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

#### Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հողված

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար
<i>Ֆինանսական ակտիվներ</i>	
Դրամական միջոցներ և համարժեքներ	2
	2
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-
	-
Զուտ արդյունք	2

Հողված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար
<i>Ֆինանսական ակտիվներ</i>	
Դրամական միջոցներ և համարժեքներ	5
	5
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-
	-
Զուտ արդյունք	5

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	0.20	1

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

*Տոկոսադրույքային ռիսկ*

Ընկերության ստացված Վարկերն ու փոխառությունները և վարձակալական պարտավորություններն ունեն ֆիքսված տոկոսադրույքներ, հետևաբար շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը նշանակալի ազդեցություն չունի Ընկերության ֆինանսական արդյունքների վրա:

*բ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Քանի որ Ընկերությունը չունի առևտրային դեբիտորական պարտքեր, պարտքային ռիսկի հիմնական աղբյուրը հանդիսանում են դրամական միջոցները և դրանց համարժեքները: Ընկերությունը կառավարում է այս ռիսկը՝ իր միջոցները տեղաբաշխելով բացառապես հայտնի և վստահելի բանկային հաստատություններում:

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,446	22,531
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	<b>18,446</b>	<b>22,531</b>

Ղեկավարությունը գտնում է, որ բանկերում պահվող միջոցների գծով սպասվող պարտքային կորուստները նշանակալի չեն, և պարտքային ռիսկի մակարդակը գնահատվում է ցածր:

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինեի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.

	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Միջին կշռված արդյունավետ				Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
		Մինչև 6 ամիս	6-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի		
Առևտրային կրեդիտորական պարտքեր		24,202	-	-	-	24,202	24,202
Վարձակալության գծով պարտավորություններ	10.0%	123,401	130,544	210,083	130,789	594,817	583,094
Վարկեր և փոխառություններ	13.41%	53,446	39,401	71,149	23,471	187,467	164,463
		<b>201,049</b>	<b>169,945</b>	<b>281,232</b>	<b>154,260</b>	<b>806,486</b>	<b>771,759</b>

2023թ.

	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Միջին կշռված արդյունավետ				Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
		Մինչև 6 ամիս	6-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի		
Առևտրային կրեդիտորական պարտքեր		20,815	-	-	-	20,815	20,815
Վարձակալության գծով պարտավորություններ	10.0%	119,153	56,728	170,742	195,013	541,636	466,451
Վարկեր և փոխառություններ	13.98%	54,547	20,224	24,966	56,403	156,140	124,220
		<b>194,515</b>	<b>76,952</b>	<b>195,708</b>	<b>251,416</b>	<b>718,591</b>	<b>611,486</b>

Ընկերությունն իրացվելիության ոլորտի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

## 23 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

### 23.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,329	26,329	-	-
	<b>26,329</b>	<b>26,329</b>	-	-
<i>Ֆինանսական պարտավորություններ՝</i>				
Վարկեր և փոխառություններ	164,463	-	-	164,463
Վարձակալության գծով պարտավորություններ	583,094	-	-	583,094
Առևտրային կրեդիտորական պարտքեր	24,202	24,202	-	-
	<b>771,759</b>	<b>24,202</b>	-	-

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	30,545	30,545	-	-
	<b>30,545</b>	<b>30,545</b>	-	-
<i>Ֆինանսական պարտավորություններ՝</i>				
Վարկեր և փոխառություններ	124,220	-	-	124,220
Վարձակալության գծով պարտավորություններ	466,451	-	-	466,451
Առևտրային կրեդիտորական պարտքեր	20,815	-	-	-
	<b>611,486</b>	-	-	-

#### Ամորիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ընկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Ընկերության ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

## 24 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	213,573	48,855
Գումարած՝ ստորադաս վարկ	-	-
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(26,329)	(30,545)
Կապիտալ	187,244	18,310
Ընդհանուր սեփական կապիտալ	213,573	48,855
Վարկեր և փոխառություններ	164,463	124,220
Ընդհանուր ֆինանսավորում	378,036	173,075
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	2.02	9.45

## 25 Պայմանականություններ

### 25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### 25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

### 25.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

## 26 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն:

### 26.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Լիանա Մարտիրոսյանի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%:

26.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին	2023թ. դեկտեմբերի 31-ին
Գործարքներ	ավարտված տարի	ավարտված տարի
Վարկերի և փոխառությունների ստացում	-	81,590
Վարկերի և Փոխառությունների մարում	19,675	96,795
Տոկոսային ծախս	357	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	968	-
Փոխառությունների տրամադրում	178,220	41,341
Փոխառությունների հետ վերադարձ	41,850	-
Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ		
Տրամադրված փոխառություններ	146,786	10,541
Վարձակալության գծով պարտավորություններ	4,327	-
Վարկեր և փոխառություններ	-	19,675
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	37,217

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Ընկերությունն իրականացրել է դրամական միջոցների բաշխում բաժնետերերին: ՖՀՄՍ-ի առաջին անգամ որդեգրման և «Վարձակալություն» ՖՀՄՍ 16-ի հետահայաց կիրառման արդյունքում, նշված ժամանակաշրջանի բաշխման մի մասը գերազանցել է առկա չբաշխված շահույթի մնացորդը՝ պայմանավորված վարձակալության գծով ծախսերի ճանաչման ժամանակային տարբերություններով:

Համապատասխանաբար, բաշխումն գերազանցող մասը՝ ընդհանուր 10,541 հազար դրամի չափով, վերադասակարգվել է որպես բաժնետիրոջից ստացման ենթակա փոխառություն: Փոխառությունն ապահովված չէ, անտոկոս է և ենթակա է մարման՝ ըստ պահանջի: Ընկերությունն ակնկալում է փոխառությունը փակել ապագա ժամանակաշրջանների շահույթների հաշվին, երբ ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը չբաշխված շահույթի վրա կվերականգնվի :

### 26.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	35,088	30,933

## 27 ՖՀՄՍ-ների կիրառումն առաջին անգամ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն առաջին անգամ է պատրաստում և ներկայացնում ֆինանսական հաշվետվությունները համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ): Հետևաբար, ՖՀՄՍ-ներին անցումը կատարվել է 2024թ. հունվարի 1-ի դրությամբ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»: ՖՀՄՍ-ների համաձայն՝ Ընկերությունը կատարել է բոլոր պարտադիր ճշգրտումները: Ընկերության նկատմամբ այլընտրանքային ճշգրտումները կիրառելի չէին: ՖՀՄՍ-ներին անցման ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ստորև.

### Ընդհանուր դրույթներ

ՖՀՄՍ-ներով առաջին անգամ պատրաստված ֆինանսական հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին երեք հաշվետվություն (նախկին անվանումը՝ Հաշվապահական հաշվեկշիռ), շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին երկու հաշվետվություն (նախկին անվանումը՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն), դրամական միջոցների հոսքերի մասին երկու հաշվետվություն և սեփական կապիտալում փոփոխությունների մասին երկու հաշվետվություն և դրանց առնչվող ծանոթագրությունները՝ ներառյալ համադրելի տեղեկատվությունը:

### Դրամական միջոցների մասին հաշվետվություն

ՖՀՄՍ-ների համաձայն՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը առաջին անգամ պատրաստվել է անուղղակի մեթոդով, ըստ որի, շահույթը կամ վնասը ճշգրտվում է՝ հաշվի առնելով ոչ դրամական բնույթի գործառնությունների արդյունքները, անցյալ կամ ապագա գործառնական գործունեության դրամական միջոցների մուտքերի կամ վճարումների հետաձգման կամ հաշվեգրման արդյունքները, ինչպես նաև ներդրումային կամ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված հասույթների կամ ծախսերի հոդվածների արդյունքները:

*Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

ՖՀՄՍ-ների առաջին անգամ կիրառման արդյունքում Ընկերությունը որդեգրել է նոր և վերանայված ստանդարտները, որոնք ներկայացված են ծանոթագրություն 2.5-ում, ինչպես նաև, առաջին անգամ բացահայտել է ֆինանսական գործիքների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կատեգորիաները՝ ներառյալ Ընկերության ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը